

երբ անիկա Մոռկուա այցելէ Աղէքսանդր Գ. ի արձանին բացումին ասեն, Ֆրանսայէն խընթեր են որ Համբաւաւոր ոստիկանապես Լըփին իրենց օգնութեան հասնի: Լըփին հիմա Մոռկուա կը գտնութի:

— Երկու միլիոն հինգ հարիւր հազար տոլար պիտի ծախտուի իսաւալական կառավարութեան կողմէն՝ վենետիկ ցամաքին հետ միացնելու համար գետնուղիով մը, որ երկուք ու իչս մըն երկայնութիւն պիտի ունենայ, և պիտի անցնի Աղբական ծովուն ծանծաղ մէկ մասին տակէն:

— Ֆրանսա սովորական դարձած իր նաւային արկածներէն հաս մըն ալ ունեցաւ, երբ ընդուղիս նաւ մը, վանտըմէր, բաղիսերով Սէյնթ Լուի մարտանալին՝ ծովուն յատակը իջաւ: 26 նաւազներ խեղդուեցան այս աղէտին մէջ:

— Գերմանական երեք մարտանաւեր, Մոթքէ, Պրիմէն, և Սթէթին, հիմա Ամերիկան ջուրերուն մէջ կը գտնուին իրեւ բարեկամական այցելու: Իրեման նաւաստիները մէծ հիրասերութիւններու կ'արժանանան՝ նաշխնկթինք և Նիու Եռքի մէջ:

— Հանրապետականներու նախագահական թէկնածուն որոշելու համար Շեքակոյի մէջ ժողովները սկսած են վիճելի քուէները նշելու համար: Վիճելի քուէներէն 84 հատի չափը թէֆթի կողմը գարձուեցաւ, բայց Խովազիլի պաշտպանները կ'ամրասատանեն թէֆթեանները իրեւ բանի միջոցներ գործածողներ: Ռուզբիլթ յայտարարեք է, թէ անիրաւ միջոցներ եթէ գործածուին իրեն դէմ, ինք իրեւ անկախ թեկնածու մը հրապարակ պիտի իջնէ:

— Թայքէնիք ի աղէտին պատճառները քննելու համար կարգուած ծերակուտական յանձնախումբը իր գործը լինցուց՝ յանցաւոր գանէլով Հուայք Սքար Լայն ի պաշտօնէութիւնը, և ծովագնացութիւնը ապահով գարձնելու հիմնական միջոցներ թեղադրելով:

— Քոլոմպոսի համար Ուաշնկթոնի մէջ կանչնուած փառաւոր արձանին բացումը կատարուեցաւ Յունիս 8-ին: Ամենախօսութիւններ ըրին նախ. Թէֆթ, ձըմթիս Տառլին, Խտարական դեսպանը եւ ուրիշ նշանաւոր անձնաւորութիւններ:

— Պուլկարիոյ թագաւորն ու թագուհին այցելութիւն մը տուին Գերմանիոյ կայսերական ընտանիքին՝ Փոթոսամի մէջ:

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Չ Ա Բ Ս Հ Ա Բ Ի Ի Բ Ա Մ Ե Ա Կ

Կ. Պոլիս, 4-17 Մայիս 1912
Եկան Վոլոք խան թիւ 19

Տէր Խմբագիր,

Հայ Տպագրութեան 400-ամեակի Յանձնաժողովը կը խնդրէ Ձեր Աղնուութենին որ բարեհամիք յետապայ զեկոյցը հրատարակէլ ձեր թէրթի մօտակայ մէկ թիւին մէջ:

Կանխայայտ չնորհակալութեամբ
Կարգադիր Յանձնախումբ

«Ապրիլ 29-ին Կ. Պոլսոյ ազգ. Կեդրոնական Վարժարանի Ամփիթատրոնին մէջ տեղի ունեցաւ Հայ Տպագրութեան 400-ամեակի յորբեանական մարմանը Յ թի նիստը: Ներկայ էին 20 է աւելի Միութեանց, Բնիկեակցութեանց և Մամուլի լիազօր ներկայացուցիչները:

Որոշուեցաւ՝

Ս. Դիմել Կովկաս, Ամերիկա և այլուր, ամէն տեղ միհենոյն օրուան մէջ (Նոյեմբեր 25-ին) տօնելու համար Հայ տպագրութեան 400-ամեակի:

Բ. Հրաւերիլ Հայ Տպագրութեան 400-ամեակի առթիւ անհական գործեր պատրաստողները արտայայտուիլ միհենոյն օրուան մէջ:

Գ. Հրատարակիլ Հայ Տպագրութեան պատմութիւնը, մասնագէտներու աշխատակցութեամբ, անոր մէջ զետեղելով էջեր առաջին անգամ տպագրուած Հայ գրքէն՝ Պարզաւումարէն:

Դ. Հանգէններ սարքել նոյն օրը ցերեկին կեդրոն տեղ մը, իսկ նոյն գիշերը՝ զանազան թալկերու մէջ:

Այս առթիւ յորեկեանական մարմինը ընտրեց 5 անդամներէ բարկացնեալ գործադիր ժողով մը, ի գործ դնելու համար վերոգրեալ որոշումները:»